ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18-Ա

Ք. Երևան 17 մարտի 2016թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով),

կազմով՝ Ս. Սահակյանի, Ա. Խուդավերդյանի, Լ. Պետրոսյանի, Ա. Սարգսյանի, Է. Շաթիրյանի,

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի հիման վրա քննարկեց ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված էթիկայի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարցը:

«Մարաթուկ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանը դիմում է ներկայացրել Բարձրաստիճան

պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա. Շաբոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված էթիկայի մի շարք կանոնների խախտման հարցը քննարկելու վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացվել է «Փաստինֆո» լրատվական գործակալության հրապարակումը 2015 թվականի հունիսի 20-ին Ծաղկաձոր քաղաքում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա. Շաբոյանի կողմից արված հայտարարության վերաբերյալ (http://www.pastinfo.am/hy/node/72664):

Հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 18-ի թիվ 16-Ա որոշմամբ «Մարաթուկ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տ. Վարդանյանի դիմումի հիման վրա հարուցվել է վարույթ: Հանձնաժողովը 2016 թվականի փետրվարի 18-ի թիվ Ե-327 գրությամբ Ա. Շաբոյանին է ուղարկել վարույթ հարուցելու մասին որոշումը՝ առաջարկելով նրան տասնօրյա ժամկետում ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ իր առարկությունները և բացատրությունները:

2016 թվականի փետրվարի 29-ին Ա. Շաբոյանը Հանձնաժողով է ներկայացրել առարկություններ:

2016 թվականի մարտի 14-ին Հանձնաժողովը «Մարաթուկ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենից ստացել է դիմում, որով ընկերությունը հայտնում է, որ չի պնդում իր ներկայացրած դիմումը:

Այս կապակցությամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ դիմողը կորցրել է դիմումում բարձրացված հարցի քննության նկատմամբ իրավական հետաքրքրությունը, ինչն անձի դիմումի հիման վրա հարուցված վարույթը շարունակելու անհրաժեշտ պայման է: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմումը ներկայացվել է մինչև հարուցված վարույթի արդյունքում եզրակացության ընդունման՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի լրանալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ հարցի քննությունը ենթակա է դադարեցման:

Ելնելով վերոշարադրյալից՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Մարաթուկ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի դիմումի հիման վրա հարուցված վարույթի շրջանակում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված էթիկայի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարցի քննությունը դադարեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**